ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2011 թվականի թիվ 53-Ա

2011Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ <<ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ>> ԾՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ <<ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆ >> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2011թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին << Հանրապետության տոն >> միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2011թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 375.0 հազ. դրամ գումարն ուղղել <<Հանրապետության տոն>> միջոցառման կազմակերպմանը:

2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանին <<Հանրապետության տոն >> միջոցառումը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

25 մայիսի 2011թ.
ք. Իջևան